



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 մարտի 2023 թվական

ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Ռաֆիկ Գևորգյանի ընդդեմ Երևան նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի՝ նոտարի գործողությունը դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/0669/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ռաֆիկ Գևորգյանը 2023 թվականի փետրվարի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի՝ նոտարի գործողությունը դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով՝ հիմքում դնելով նոտարի գործողության՝ առանց Լյայլա Ղուկասյանի՝ ժառանգ հանդիսանալու փաստը ստուգելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր վերջինիս տրամադրելու ոչ իրավաչափ լինելը:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի մարտի 9-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, նույն հոդվածի 2-րդ մասին, 220-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/4272/05/10 գործով 2016 թվականի հունվարի 27-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին, ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ թեև հայցվորը դատարան ներկայացրած հայցադիմումով խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել նոտարի գործողությունները, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված հայցադիմումով հայցվորի նպատակը Լյայյա Դուկասյանին 2013 թվականի հուլիսի 11-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելն է և, որ նշվածի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ուստի հայցվորի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին¹:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ

¹ Տե՛ս գործը, թերթեր 30-31:

առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. «(...) Հայցվորը Դատարան ներկայացված հայցադիմումով հայրնել է, որ կեղծ ժառանգության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու պահանջով ԵԴ/57020 քաղաքացիական գործով Դատարանը հայցապահանջը մերժել է՝ հիմքում դնելով, որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նույնական գործողության արդյունքով նույնի հասարակած փաստը ասպացուցման ենթակա չէ, եթե նույնական կարգով վավերացված փաստաթղթի իսկությունը վիճարկված չէ օրենսգրքով սահմանված կարգով կամ նույնական գործողությունը չի ճանաչվել ոչ իրավաչափ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Ելնելով վերը շարադրվածից, որ նույնը կարարել է ակնհայտ անժխտելի և անհերքելի կոռուպցիայից ելնելով ապօրինի գործողություն՝ ինդրել է գործը վերցնել դատարանի վարույթ և վճռով նույնի գործողությունը ճանաչել ոչ իրավաչափ՝ հնարավորություն արեղծելով նշված գործով քաղաքացիական դատարանում ժառանգության իրավունքի վկայականը վերաքննիչ դատարանում անվավեր ճանաչվի, իսկ եթե օրենքը թույլ է տալիս սույն գործով որպես հերևանք վարչական դատարանը վճռով անդրադառնա նաև հերևանքի բավարարմանը:

Այսինքն՝ հայցադիմումի ուսումնասիրությունից երևում է, որ հայցվորը վիճարկվող որոշումը համարում է իր վիճակը վարթարացնող վարչական ակտ, իսկ առաջացած վեճը՝ հանրային իրավահարաբերություններից բխող:

Տվյալ դեպքում, հայցադիմումի ուսումնասիրությունից երևում է, որ հայցվորը վիճարկում է հենց նույնի գործողությունները՝ դրանք համարելով ոչ իրավաչափ և օրենքին հակասող, հայցվորը դիմել է դատարան ոչ թե հիշյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով՝ ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճ առկա լինելու պարճառաբանությամբ, այլ դիմել է դատարան նույնի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը վերացնելու մասին պահանջով՝ նույնի գործողությունները ոչ իրավաչափ լինելու հիմքով իր վիճակը վարթարացնող վարչական ակտը վերացնելու պարճառաբանությամբ, հաշվի առնելով, որ Դատարանում արդեն իսկ քննվել է վեճ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջով»²:

² Տե՛ս գործը, թերթեր 37-38:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր՞ է արդյոք Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի հերևությունն այն մասին, որ թիվ ՎԳ/0669/05/23 գործն ըստ հայցի՝ Ռաֆիկ Գևորգյանի ընդդեմ Երևան նույնարական փարածքի նույնար Արոմ Հայրապետյանի՝ նույնի գործողությունը դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...):»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին արյանի դատարանում, բացառությամբ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...):»:

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին արյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդարյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդարյա չէ իրեն, այն պատճառարանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդարյության»:

Նույն օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդարյա են նույնարական գործողության կամ նույնարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նույնը նույնարական գործողություններ իրականացնում է փաստաթղթեր վավերացնելու կամ վավերացված փաստաթղթեր տրամադրելու կամ օրենքով նախատեսված այլ գործողություններ կատարելու միջոցով: Նույնը, վավերացնելով փաստաթուղթը, հաստատում է դրա օրինականությունը և հավաստում փաստաթղթի լիարժեք ապացուցողական ուժը»:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նույնը իրականացնում է հետևյալ նույնարական գործողությունները. (...) 3) տալիս է ժառանգության իրավունքի վկայագրեր»:

Նշված օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ըստ օրենքի կամ ըստ կրակի ժառանգության իրավունքի վկայագրեր տալու դեպքում նույնը ստուգում է ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները կամ կրակի առկայությունը, ժառանգության զանգվածի կազմը»:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել «Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության վարչական գործով՝ 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ արձանագրելով հետևյալը. «(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից

տարանջարվում է թե սուբյեկտային կազմով, թե բովանդակությամբ և թե օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...):»³:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 2016 թվականի մայիսի 10-ի թիվ ՍԴՌ-1271 որոշմամբ անդրադառնալով նոտարների իրավական կարգավիճակի առանձնահատկություններին, արձանագրել է հետևյալը. «Օրենսդիրը հանրային իշխանությանը բնորոշ որոշ գործառույթների իրականացումը պատվիրակել է նուրարին: (...) Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալն ընդգծում է րվյալ գործառույթի կարևորությունը հանրային կյանքի կազմակերպման րեսանկյունից: Ուստի նուրարը չի կարող պարզապես համարվել որպես իր ռիսկով գործող անհատ ձեռնարկատեր (...):»⁴:

Վճռաբեկ դատարանը Սերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նուրարական տարածքի նուրար Էմմա Շարոյանի, երրորդ անձ Սրյոյիկ Պողոսյանի՝ վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Թեև օրենսդիրը սահմանել է, որ նուրարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, այսինքն՝ ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս նուրարը իրականացնում է հանրային գործառույթ, սակայն վերջինս չի հանդիսանում ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձ, հետևաբար նուրարը ինստիտուցիոնալ

³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ «Վեստ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴՆ/0830/05/14 որոշումը:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի և Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Նուրարիատի Մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով 2016 թվականի մայիսի 10-ի թիվ ՍԴՌ-1271 որոշումը:

առումով վարչական մարմին չէ, նուրարը օժտված չէ նաև այլ պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կարգավիճակով, այսինքն՝ նուրարը ՀՀ իրավական համակարգում գործառնության առումով նույնպես վարչական մարմին չէ:

Միաժամանակ Վճռաբեկ դարարանն արձանագրում է, որ ժառանգության իրավունքի վկայագիրը տրվում է մասնավոր իրավունքի, մասնավորապես՝ ժառանգական իրավունքի կոնկրետ հարցի կարգավորման կապակցությամբ՝ ի տարբերություն վարչական ակտի, որն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում: (...)

Վճռաբեկ դարարանն արձանագրում է, որ ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելիս նուրարն իրականացնում է հանրային գործառնություն, քանի որ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը մերժելիս նուրարի և քաղաքացու միջև առկա են ոչ թե կոռորդինացիոն (համադասություն) բնույթի, այլ սուբորդինացիոն (ենթակայություն) բնույթի իրավահարաբերություններ: Սույն իրավահարաբերություններում քաղաքացին և նուրարը հանդես չեն գալիս որպես մասնավոր իրավահարաբերությունների հավասար սուբյեկտներ: Եման իրավահարաբերություններում նուրարն օժտված չէ կամքի ազատությամբ, այլ հանդես է գալիս որպես հանրային իրավահարաբերությունների սուբյեկտ, որտեղ իրավահարաբերության մասնակիցներից մեկը, միակողմանի հիմնվելով իրավական կարգավորումների վրա, իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում է կայացնում:

(...) Վճռաբեկ դարարանն արձանագրում է, որ (...) երբ հայցի առարկան ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելն էր, ապա անձը դարարան չէր կարող ներկայացնել վիճարկման հայց, քանի որ անձը վիճարկման հայցով կարող էր պահանջել ամբողջությամբ կամ մասնակի վերացնել վարչական ակտը, իսկ ժառանգության իրավունքի վկայագիրը վարչական ակտ չի հանդիսանում:

Ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջը չի կարող դիրարկվել նաև որպես նուրարական գործողությունը վիճարկելու պահանջ,

էթե ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված չէ նույնարական գործողությունների վիճարկումը»⁵:

Մեկ այլ՝ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունն ընդդեմ Ալբերտ և Անահիտ Հակոբյանների, երրորդ անձ Երևան քաղաքի Կենտրոն նույնարական տարածքի նույնպես Էմմա Շարոյանի՝ վարչական գործով 2021 թվականի դեկտեմբերի 10-ի որոշմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «[Ժ]առանգության իրավունքի վկայագրի վիճարկման հայցապահանջի ենթակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ պահանջի հիմքում արդյոք ընկած է նույնարական գործողությունների վիճարկման փաստարկը, թե՛ ոչ: Այլ կերպ ասած, այն դեպքում, երբ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված է նույնարական գործողությունների վիճարկումը, ապա այն ենթակա է քննության վարչական դատարանի կողմից՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով»⁶:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Մինևս ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Այսինքն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Մերժիկ Պողոսյանն ընդդեմ ՀՀ Կենտրոն նույնարական տարածքի նույնպես Էմմա Շարոյանի, երրորդ անձ Սյրոպիկ Պողոսյանի վարչական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՎԴ/4901/05/11 որոշումը:

⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատունն ընդդեմ Ալբերտ և Անահիտ Հակոբյանների, երրորդ անձ Երևան քաղաքի Կենտրոն նույնարական տարածքի նույնպես Էմմա Շարոյանի վարչական գործով 2021 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ ԵԿԴ/1274/02/13 որոշումը:

Ընդ որում, սույն որոշմամբ վկայակոչված իրավական նորմերի և դիրքորոշումների վերլուծությունից հետևում է, որ նոտարի կողմից ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումն օրենսդրի կողմից դիտարկվում է որպես նոտարական գործողության կատարում, որն ըստ էության, նպատակաուղղված է ժառանգության իրավունքի ոլորտում կոնկրետ հարցի կարգավորմանը: Ուստի, հաշվի առնելով տվյալ իրավահարաբերություններում նոտարի՝ հանրային գործառույթ իրականացնելու հանգամանքը, այն է՝ միակողմանի իրավահարաբերության մյուս կողմի համար պարտադիր որոշում կայացնելը, նշված գործողության իրավաչափության հարցը պարզելիս անհրաժեշտ է առաջին հերթին բացահայտել, թե արդյո՞ք ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի հիմքում դրված է նոտարական գործողությունների վիճարկումը, թե՛ ոչ:

Այսպես, օրենսդրի կողմից ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրման դեպքում սահմանվել են նոտարի կողմից կատարման ենթակա որոշակի գործողություններ, ինչպիսիք են՝ ժառանգատուի մահվան փաստը, ժառանգության բացման ժամանակը և վայրը, ազգակցական հարաբերությունները, կտակի առկայությունը, ժառանգության զանգվածի կազմը ստուգելը: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում, երբ անձը վիճարկում է նոտարի կողմից՝ նախքան ժառանգության իրավունքի վկայագիր տրամադրելը կատարվող գործողությունների իրավաչափությունը, վեճը գտնվում է հանրային իրավահարաբերությունների դաշտում:

11. Սույն վարչական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ռաֆիկ Գևորգյանը 2023 թվականի փետրվարի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի՝ նոտարի գործողությունները դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով⁷, որը ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին⁸,

- ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորի նպատակը

⁷ Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

Լյայա Ղուկասյանին 2013 թվականի հուլիսի 11-ին տրված ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելն է, նշվածի հիմքում դրված չէ նոտարական գործողությունների վիճարկումը, ուստի հայցվորի պահանջն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին⁹,

- հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ հայցվորը դիմել է դատարան ոչ թե հիշյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջով՝ ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճ առկա լինելու պատճառաբանությամբ, այլ դիմել է դատարան՝ նոտարի՝ ժառանգության իրավունքի վկայագիրը վերացնելու մասին պահանջով՝ նոտարի գործողությունները ոչ իրավաչափ լինելու հիմքով իր վիճակը վատթարացնող վարչական ակտը վերացնելու պատճառաբանությամբ՝ հաշվի առնելով, որ դատարանում արդեն իսկ քննվել է վեճ՝ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու մասին¹⁰:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ Լյայա Ղուկասյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի վիճարկման հիմքում հայցվորը դրել է նոտարի գործողության ոչ իրավաչափ լինելը, այն է՝ առանց Լյայա Ղուկասյանի՝ ժառանգ հանդիսանալու փաստը ստուգելու, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր վերջինիս տրամադրելու հանգամանքը:

Փաստորեն, սույն գործով հայցվորի հայցի փաստական հիմքը վերաբերել է ոչ թե ժառանգման իրավահարաբերություններից բխող, ժառանգությունն ընդունելու կապակցությամբ ժառանգների միջև ծագած վեճին, այլ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրման կապակցությամբ կատարված նոտարի գործողությունների իրավաչափությանը, որպիսի վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից:

⁹ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

¹⁰ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

13. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0669/05/23 գործն ըստ հայցի՝ Ռաֆիկ Գևորգյանի ընդդեմ Երևան նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի՝ նոտարի գործողությունը դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

14. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Ռաֆիկ Գևորգյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/0669/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/0669/05/23 գործն ըստ հայցի՝ Ռաֆիկ Գևորգյանի ընդդեմ Երևան նոտարական տարածքի նոտար Ատոմ Հայրապետյանի՝ նոտարի գործողությունը դատարանի վճռով ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ